ՏԵՂԵԿԱՆՔ

ՀՀ 2023թ. պետական բյուջեի նախագծի վերաբերյալ

ՀՀ 2023թ. պետական բյուջեով նախատեսվել է 2,301 մլրդ դրամ եկամուտներ, որից հարկային եկամուտների գծով 2,204 մլրդ դրամ: Հարկային եկամուտները ՀՆԱ-ի նկատմամբ կկազմի 23.7%-ը, 2022թ-ի ճշտված բյուջեի համեմատ բարելավվելով 0.5 տոկոսային կետով:

Պետական բյուջեի ծախսերը պլանավորվել են 2.590 մլրդ դրամ, 2022թ-ի ճշտված բյուջեի 2,247 մլրդ դրամի դիմաց: 2023թ պետական բյուջեի նախագծով ընթացիկ ծախսերը ծրագրավորվել են հարկաբյուջետային կանոնով և կազմում են 2,042 մլրդ դրամ: Կապիտալ ծախսերը կկազմեն 558 մլրդ դրամ՝ ՀՆԱ-ի նկատմամբ՝ շուրջ 6 %:

Պետական բյուջեի պակասուրդը կկազմի 288.9 մլրդ դրամ՝ ՀՆԱ-ի նկատմամբ կազմելով 3.1 %:

2023թ պետական բյուջեի նախագծով նախատեսվող հիմնական առանձնահատկություններն են՝

Սոցիալական ոլորտում

Սոցիալական պաշտպանության ոլորտի գծով 2023թ. նախատեսվում է 648.5 մլրդ դրամ, որը ՀՀ 2022թ. ճշտված բյուջեի համեմատ ավել է 58.7 մլրդ դրամով: Ոլորտի խոշոր փոփոխությունները վերաբերվում են կենսաթոշակային ապահովման (շուրջ 7.9%), ժողովրդագրության վիճակի բարելավման (շուրջ 49.1%), անապահով սոցիալական խմբերին աջակցության (շուրջ 1.6%), բնակարանային ապահովման (շուրջ 2.5 անգամ), ընտանիքներին, կանանց և երեխաներին աջակցության ծրագրերին (շուրջ 45.5%):

Առողջապահության նախարարության գծով 2023թ-ի համար նախատեսվում է 146.4 մլրդ դրամ՝ 2022թ-ի ճշտված բյուջեի համեմատ 5,0 մլրդ դրամով ավել:

ԿԳՄՍ նախարարության գծով 2023թ-ի համար նախատեսվում է 250.3 մլրդ դրամ՝ 2022թ-ի ճշտված բյուջեի համեմատ 23.7 մլրդ դրամով ավել: Ավելացումը պայմանավորված է ՀՀ գյուղական բնակավայրերում մինչև 100 աշակերտ ունեցող և ՀՀ Սյունիքի մարզի դպրոցներում դասավանդող ուսուցիչներին հավելավճարի տրամադրմամբ (2022 թվականին նշված ծախսը նախատեսված չի եղել և կազմում է 4.5 մլրդ դրամ), ուսուցիչների ատեստավորման նոր համակարգի ներդրման ծախսերի ավելացման (ճշտված բյուջեի նկատմամբ 2.7 մլրդ դրամ), մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների և կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթության կազմակերպմանն օժանդակող միջոցառումների (ճշտված բյուջեի նկատմամբ 1.3 մլրդ դրամ), ՀՀ հանրակրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների 11-րդ դասարանների աշակերտների ռազմամարզական ճամբարի կազմակերպման (ճշտված բյուջեի նկատմամբ 1.6 մլրդ դրամ), 1.5-5 տարեկան երեխաների նախադպրոցական կրթության ապահովման ծախսերի (ճշտված բյուջեի նկատմամբ 2. 7 մլրդ դրամ) և այլն ավելացմամբ:

2023թ բյուջեի նախագծով նախատեսվում է **աշխատավարձերի գծով բարձրացումներ՝** պայմանավորված նվազագույն աշխատավարձի 75,000 0 դրամ սահմանմամբ:

Մասնավորապես, ՀՀ 2023 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսվում է բարձրացնել օրենքով սահմանված բազային աշխատավարձի չափը, միաժամանակ ապահովելով ընդամենը աշխատանքի վարձատրության գծով նախատեսվող ծախսերի աճ՝ միջինը շուրջ 10%-ի չափով:

2023 թվականի համար աշխատավարձի ֆոնդի հաշվարկման հիմքում բազային աշխատավարձի չափ է ընդունվել 83,200.0 դրամը:

10%-ով աճի ցուցանիշը պահպանելու նպատակով աշխատավարձի բարձրացումն իրականացվել է պարգևատրման գումարի մասնակի նվազեցման հաշվին: Ընդհանուր առմամբ փոփոխվել է պարգևատրման ֆոնդի հաշվարկման մեխանիզմը: Բոլոր մարմինների համար կիրառվել է պարգևատրման գումարների հաշվարկման 16% դրույքաչափ՝ ներկայիս 30%-ի փոխարեն: Բացի այդ, ի տարբերություն գործող հաշվարկի, երբ պարգևատրման գումարը հաշվարկվում է աշխատավարձի տարեկան ֆոնդի նկատմամբ 30%-ի չափով, առաջարկվում է պարգևատրման գումարը հաշվարկել միայն հիմնական աշխատավարձի նկատմամբ՝ դրա 16%-ի չափով (առանց հավելումների և հավելավճարների):

Աշխատավարձի ֆոնդում նախատեսվել է նաև հանրային ծառայողների պարգևատրման ֆոնդ՝ նրանց 2022 թվականի տարեկան աշխատավարձի ֆոնդի 10 տոկոսի չափով:

Էկոնոմիկայի նախարարության գծով 2023թ-ի համար նախատեսվում է 64.5 մլրդ դրամ՝ 2022թ-ի ճշտված բյուջեի համեմատ 3.1 մլրդ դրամի ավել, որոնցից խոշոր փոփոխությունները վերաբերվում են գյուղատնտեսության ոլորտում աջակցության նոր ծրագրերի ֆինանսավորում (անասնաբուծության ճյուղում իրականացվող ներդրումային ծրագրերին և հողերի կոնսոլիդացիային աջակցություն), գյուղատնտեսության ոլորտում աջակցության շարունակական ծրագրերի ֆինանսավորում (ինտենսիվ այգեգործություն), Տնտեսության արդիականացման միջոցառումներին աջակցություն (այդ թվում բարձր որակավորում ունեցող մասնագետներ) ծրագրերին:

Ենթակառուցվածքների ոլորտում

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության գծով 2023թ-ի համար նախատեսվում է 292.3 մլրդ դրամ՝ 2022թ-ի ճշտված բյուջեի համեմատ աճել է 5.7 մլրդ դրամով: Ոլորտի փոփոխությունները վերաբերվում են ճանապարհային ցանցի բարելավման, ոռոգման համակարգի առողջացման, ջրամատակարարաման և ջրահեռացման բարելավման, դպրոցների սեյսմիկ անվտանգության մակարդակի բարձրացման ծրագրերին:

Պաշտպանության նախարարության գծով 2023թ-ի համար նախատեսվում է 505.8 մլրդ դրամ՝ 2022թ-ի ճշտված բյուջեի համեմատ 132 մլրդ դրամով ավել:

Աջակցություն Արցախի Հանրապետությանը

2023թ նախատեսվում է Արցախի Հանրապետությանը տրամադրել աջակցություն 144 մլրդ դրամ: